

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ՝
ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Ղազարյան Արևիկ
*Երևանի պետական համալսարան,
Հայաստան*

Համառոտ ներածական: Սովորողների կենսաբանական ծրագրում կողմնորոշված են գենետիկական նախադրյալներ, որոնք կրթական միջավայրում հարմարվելու առաջնահերթ նախապայման կարող են լինել, եթե գենետիկական ներուժը (կառուցվածք) դրսևորվի գործառուղի՝ ֆենոտիպային համակարգում: Կրթական միջավայրի և սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված հարմարումը կարող է լինել երկուստեք ներգործությամբ: Մի կողմից սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված հարմարման մեխանիզմներով է ձևավորվում կրթական միջավայրը՝ բարոյահոգեբանական մթնոլորտով և սովորողների միջանձնային հարաբերություններով: Մյուս կողմից կրթական միջավայրը ներագդելով կարող է հանգեցնել սովորողների ապահարմարմանը: Ապահարմարումը կրթական միջավայրում հանգեցնում է սովորողների արդյունավետ ուսումնառության խաթարման: Ուսուցչի գերակա խնդիրն է պլանավորել դասը՝ հիմք ընդունելով սովորողների գենետիկական նախադրյալները և նպաստավոր կրթական միջավայր ձևավորելով հարմարման համար:

Հիմնախնդիրը: Սովորողների զարգացման կենսաբանական և պատմամշակութային ծրագրերի զուգակցմամբ է պայմանավորված կրթական միջավայրում նրա հարմարվելու հնարավորությունը: Կրթական միջավայրում ուսուցիչը պետք է հաշվի առնի սովորողների գենետիկական նախադրյալները և ձևավորի այդ հնարավորությունների դրսևորման սահմանները (ռեակցիայի նորմա), բովանդակությունը, ձևերը:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտություններն իրականացվել են մանկավարժության երիտասարդ գիտաճյուղերի՝ մանկավարժական մարդաբանության, մանկավարժական արհիվոլոգիայի, մանկավարժական ախտորոշման, մանկավարժական վալեոլոգիայի շրջանակներում: Վերլուծելով և համադրելով տարբեր մոտեցումներն ու կարծիքները՝ կարել է ասել, որ ձևավորվել են հիմնականում երկու հայեցակարգային մոտեցումներ՝ 1. անտրոպոցենտրիկ, 2. էկոցենտրիկ, որոնք մարդու կենսաբանական և պատմամշակութային ծրագրերի համադրելիությունը միջավայրում դիտարկում են բնություն-մարդ-կրթություն-մշակույթ համակարգի բաղադրիչներից մեկի գերակայությամբ [2, 132]:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել սովորողների գենետիկական նախադրյալների կարևորությունը կրթական միջավայրում հարմարվելու ընթացքում:

Բանալի բառեր: *Կենսաբանական ծրագիր, պատմամշակութային ծրագիր, գենոտիպ, ֆենոտիպ, գենետիկական նախադրյալներ, կրթական միջավայր, հարմարում, հարմարման պլանավորում:*

Սովորողների անհատական զարգացումը պայմանավորված է մարդաբանական երկու ծրագրերի համադրմամբ՝ կենսաբանական և պատմամշակութային: Մարդու կենսաբանական ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղկացուցիչ մասերից՝ գենոտիպ, որը ծրագրի կառուցվածքային հիմքն է և գործառական արտաքին դրսևորում՝ ֆենոտիպ: Սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված հարմարումը կրթական միջավայրում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ներգործությամբ դրսևորվում է տարբեր ֆենոտիպային՝ արտաքին արտահայտվածությամբ: Սովորողների գենետիկական նախադրյալներով է որոշակիացվում օրգանիզմի որակական փոփոխությունների զարգացման ընթացքը, որը, գենետիկական և մտավոր գործակիցներով, ժառանգման մեխանիզմներով պայմանավորված, յուրաքանչյուր մարդու համար եզակի է: «Մարդու բանականությունը հնարավորություն է տալիս պահանջմունքներին համապատասխան հարմարվելու և դրսևորելու կենսաբանական ռիթմերը: Մարդը հասարակության մեջ կարող է ինքնաիրացնել իր ներուժը՝ տրված տիեզերքի և բնության կողմից» [6, 18]:

Սովորողների զարգացումը, ենթարկվելով կենդանական աշխարհի պատմական զարգացման համընդհանուր օրենքներին (ֆիլոգենետիկ), ունի նաև անհատական զարգացման (օնոգենետիկ) եզակի առանձնահատկություններ, որոնք պատմամշակութային ծրագրի ներգործությամբ միջավայրում տարբեր տարիքային փուլերում, համապատասխան կրթական աստիճանում ձևավորում են հարմարման մեխանիզմներ: «Ժառանգված բնածինը և ձեռքբերովի առանձնահատկությունները տարանջատված չեն, միասնական են: Ձեռք բերված հատկանիշների բնութագրերը միջավայրում մոդիֆիկացվում են ամբողջ կյանքի ընթացքում» [3, 180]:

Կրթական միջավայրի և սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված հարմարումը կարող է լինել երկուստեք ներգործությամբ: Մի կողմից, սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված՝ հարմարման մեխանիզմներով է ձևավորվում կրթական միջավայրը՝ բարոյահոգեբանական մթնոլորտով և սովորողների միջանձնային հարաբերություններով, մյուս կողմից կրթական միջավայրը ներագրում է սովորողների համարման գործընթացի վրա: «Երեխայի զարգացումը ներկայացվում է որպես բնական օրենքներին ենթարկվող և հասունացման ձևով ընթացող գործընթաց, իսկ ուսուցումն ընկալվում է որպես զարգացման գործընթացում հայտնվող հնարավորությունների սոսկ արտաքին օգտագործում: Չարգացումը ստեղծում է հնարավորություններ, իսկ ուսուցումը դրանց իրականացումն է» [4, 70]: Մակայն ոչ միշտ է, որ սովորողները համարվում են կրթական միջավայրին, ինչի արդյունքում էլ երբեմն անհնար է լինում ապահովել սովորողների ուսումնառությունը: Կրթական միջավայրում սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված հարմարումը կարելի է ուսումնասիրել երկու մոտեցմամբ՝

1. սովորողների գենետիկական նախադրյալներով պայմանավորված հարմարում, որը հանգեցնում է ուսումնառության արդյունավետ ընթացքի,

2. կրթական միջավայրի և դաստիարակությամբ պայմանավորված տարբեր ֆենոտիպային դրսևորումներ, որոնք խոչընդոտում են հարմարման գործընթացին:

Կրթական միջավայրում սովորողների հարմարման գործընթացին կարող են խոչընդոտել երկու խումբ գործոններ.

1. **անձնային կամ ներքին**, երբ աշակերտի կրթական միջավայրում չհարմարվելու պատճառը սոցիալական պահանջմունքների բացակայությունն է,

2. **արտաքին**՝ կրթական միջավայրը, աշակերտի կարգավիճակը կոլեկտիվում, անտարբերությունը կրթության նկատմամբ, ուսուցչի անձնային և մասնագիտական որակները, որոնք չեն խթանում աշակերտների գործունեությանը, ուսումնական առարկան:

Սովորողների բնածին նախադրյալները դրսևորվում են աստիճանաբար ձևավորվող և բարդացող միջավայրային փոխազդեցությունների պայմաններում և դրանցով միջնորդավորված: Ժառանգաբար փոխանցվում են հարմարման ոչ թե ֆենոտիպի կոնկրետ դրսևորումները, այլ միջավայրում գենետիկական նախադրյալների արձագանքման ձևերը՝ պայմանավորված կազմաբնախոսական, հոգեբանական առանձնահատկություններով, նյարդային համակարգով, խառնվածքային տիպով, բնավորությամբ, պահանջմունքներով, մտածելակերպով, վարքագծային դրսևորմամբ, արժեքային համակարգով: «Ուսումնառության ընթացքում կրթական միջավայրում հարմարմամբ պայմանավորված սովորողների կենսափորձը ձևավորվում է առաջին հերթին ընկալման մեխանիզմներով» [5, 54]:

Կրթական միջավայրում սովորողների հարմարումը կարելի է դիտարկել թե՛ որպես *գործընթաց*, թե՛ *դրսևորում*, թե՛ *արդյունք*: Կրթական միջավայրում որպես գործընթաց՝ սովորողների հարմարման հնարավորությունների բնական զարգացումն է գենետիկական նախադրյալների հիման վրա: Սովորողների հարմարումը՝ որպես դրսևորում, ուսումնառության ընթացքում նրա գործունեության վարքագիծն է, վերաբերմունքը կրթական միջավայրի պայմաններին: Ըստ այդ դրսևորումների՝ կարելի է վերլուծել սովորողի՝ տվյալ ժամանակամիջոցում կրթական միջավայրին հարմարվելու աստիճանը: Կարող ենք փաստել այն դեպքում, եթե սովորողների վարքագիծը, միջանձնային հարաբերությունները և գործունեության արդյունավետությունը համապատասխանում են նրանց անհատական, տարիքային, հոգեբանական, սեռային հարմարումը որպես արդյունք առանձնահատկություններին, կրթական և սոցիալական պահանջմունքներին, սոցիումի կողմից ընդունված նորմերին: Սոցիալականացման ընթացքում սովորողը փոխվում է: Նրա անձնային որակները կարող են կատարելագործվել հարմարման ընթացքում ձեռք բերված փորձի հիման վրա, որքան հնարավորություն են տալիս գենետիկական նախադրյալները, իսկ ձեռքբերովի որակները կարող են կորցնել իրենց նշանակությունը, ինչն էլ իր հերթին ազդում է հարմարման կարողության վրա:

Որքան հարմարված է սովորողը կրթական միջավայրում, այնքան արագ են փոփոխվում ընկալման մեխանիզմները, հոգևոր որակների զարգացումը, հոգեկան գործընթացների կատարելագործումն ուսուցման ընթացքում: Սովորողներն արտահայտված հարմարման խնդիրներ ունենում են տարրական դպրոցից անցում կատարելիս միջին դպրոց, ապա՝ նաև ավագ դպրոց, հետո՝ բուհում՝ առաջին կուրսում: Թվարկված անցումային փուլերում ապահարմարման համար կան օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ, եթե դրանց էլ ավելանան սովորողների հարմարումն ապահովող գենետիկական նախադրյալները, ապա հասկանալի է, թե ինչ դժվարություններ կարող են ունենալ դասավանդող ուսուցիչները, սոցիալական մանկավարժները, դասղեկները աշխատանքները պլանավորելիս: Պայմանականորեն դիտարկելով, որ ներկայում սովորողների հարմարման հիմնախնդիրն առկա է գրեթե բոլոր դասարաններում: Ենթադրենք՝ ունենք կրթական միջավայրին չհարմարվող աշակերտներ, որոնց պարագայում ապահարմարման պատճառները գենետիկական նախադրյալներն են: Փորձենք պլանավորել դասը:

1. **Ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, գենետիկական նախադրյալներ:** Ուսուցիչը փորձում է ախտորոշել կրթական միջավայրում ապահարմարված աշակերտի ուժեղ և թույլ կողմերը՝ մոդելավորելով նրա կանխատեսվող վարքագիծը թիմային աշխատանք կատարելիս՝ ընթացքում հենվելով գենետիկական նախադրյալների վրա: Անհրաժեշտ է վերլուծել նաև դասարանի, կոլեկտիվի ուժեղ և թույլ կողմերը՝ իրականացնելով արտաքին և ներքին միջավայրի վերլուծություն: Ուսուցիչը պետք է կիրառի խոսքային և ոչ խոսքային հնարավոր մեթոդներ ու ձևեր՝ հարմարման խնդիր ունեցող աշակերտին ներգրավելու համար կրթական միջավայր: Եթե սովորողների գենետիկական նախադրյալները կարող են առավել լայն սահմաններում խոչընդոտել ուսումնառությանը, ապա անհրաժեշտ է խորհրդակցել բազմամասնագիտական թիմի հետ՝ ստանալով առավել հիմնարար մասնագիտական խորհրդատվություն:

2. **Աշակերտի ներքին մոտիվացիա:** Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել, որ աշակերտը պատկերացնի այն առաջադրանքի կատարման իմաստը, որն իրեն առաջադրվում է: Ուսուցիչը պետք է ձևավորի աշակերտի ինքնատրոլորող կրթական պահանջմունքը՝ զուգակցելով սոցիալական պահանջմունքների բավարարման հետ: Դա սկզբնական փուլում հնարավորության կտա աշակերտին, որ նա իր ներուժին համապատասխան պլանավորի աշխատանքները, որոնք անհրաժեշտ է աստիճանաբար շտկել: Պլանավորման այս փուլին խորհրդատվությամբ կարող է մասնակցել նաև ուսուցիչը:

3. **Խմբի կազմում և խմբային աշխատանք:** Խմբում ընտրել այն աշակերտներին, որոնք ինչ-որ չափով հարմարվել են այդ աշակերտի հետ աշխատելուն: Կարելի նաև աշակերտին հնարավորություն տալ, որ ինքն առաջարկի թիմակիցներին: Հետագայում աստիճանաբար կազմված խումբը կարելի է փոփոխել դասարանի այլ աշակերտներով, ընթացքում առաջարկել կիրառել հուշող հարցադրումներ կատարելու մեթոդական հնարը՝ ինչպե՞ս, ինչո՞ւ, դու ի՞նչ ես մտածում, ապացուցի՛ր՝ ում կարծիքն է համընկնում քո ասածին: Ուսուցիչը պետք է ուսումնասիրի, թե գենետիկական նախադրյալների ի՞նչ ընդհանրություններ և տարբերակիչ գծեր ունեն խմբում ներգրավված աշակերտները: Անհրաժեշտ է վերլուծել, թե ստեղծված կրթական միջավայրն ինչպես է ներագրում աշակերտների ֆենոտիպային վարքագծային դրսևորումների, մտածողության, տեսակետների արտահայտման վրա:

4. **Կարճ պատասխաններ:** Հաղորդակցման նման մոդելը պարտադրող չէ և հնարավորություն է տալիս աստիճանաբար անկաշկանդ շփվելու, խմբում ապահովելու բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ՝ յուրաքանչյուր աշակերտի համար ապահովելով հուզական տիրույթ: Թե՛ ուսուցիչը և թե՛ դասընկերները խմբային աշխատանք կատարելիս պետք է խրախուսեն տվյալ աշակերտին:

5. **Ուսուցչի և աշակերտի դերերի ապակարգավորում:** Պետք է հնարավորություն տալ, որ տվյալ աշակերտն իրեն զգա ուսուցչի դերում, առաջարկել, որ աշակերտը հետադարձ կապով ինքը վերլուծի, քննարկի կատարած աշխատանքը ոչ միայն իրենց խմբի, այլև մյուս խմբերի աշխատանքները: Անհրաժեշտ է առաջարկել լսել քննադատական կարծիք, ուսումնասիրել այդ ընթացքում աշակերտի վարքագծային դրսևորումները:

6. **Ամփոփման փուլ:** Ուսուցիչն ամփոփում է արված աշխատանքը՝ չանտեսելով և խրախուսելով կրթական միջավայրում հարմարվող աշակերտի ջանքերը, ինչպես նաև կանխատեսում է հարմարման արդյունավետության գործակիցը կրթական միջավայրում:

Հասկանալի է, որ ոչ բոլոր դասերը կարելի է պլանավորել այս ձևաչափով: Դա կախված է կրթական միջավայրում հարմարման խնդիր ունեցող աշակերտի գենետիկական նախադրյալներից, ուսումնական առարկայի առանձնահատկություններից, դասավանդվող նյութից, դասարանի կառավարման մեխանիզմներից, ուսուցչի կառավարչական, մասնագիտական կոմպետենցիաներից, աշակերտական կոլեկտիվի ներուժից, աշակերտի ներգրավվելու ցանկությունից և հնարավորություններից:

Կրթական միջավայրում հարմարման խոչընդոտները վերացնելու միտումով ուսուցիչը հաջորդիվ պետք է իրականացնի ինքնավերլուծություն՝ պլանավորված դասի մասին:

1. Դիտարկում: Հարմարման գործընթացի դիտարկումը կրթական միջավայրում պետք է ծրագրավորել՝ նպատակային, վերլուծական, կանոնակարգված բաղադրիչներով.

- Ինչո՞ւ է դժվարանում հարմարումը կրթական միջավայրին:
- Կենսաբանական ծրագրի ո՞ր գենետիկական նախադրյալներն են խանգարում կրթական միջավայրում հարմարմանը, ինչպե՞ս է դա դրսևորվում ֆենոտիպորեն:
- Հնարավոր է արդյո՞ք շտկումներ իրականացնել:
- Որքա՞ն ժամանակ կպահանջվի՝ խնդիրը փոքր-ինչ մեղմելու համար:

2. Ուղղորդող աշխատանք խմբում: Թիմային աշխատանքը հարմարման մեխանիզմները ձևավորելու և ակտիվացնելու համար ունի առավելություններ.

- Ստացվե՞ց որպես մեթոդական հնար կիրառել աշակերտին կրթական միջավայր ինտեգրվելու համար:
- Փոքր խմբում աշխատանքը հեշտացնում է հարմարման հնարավորությունները: Փոքր խմբերում աշխատանքների կազմակերպման տարբեր եղանակների և ձևերի, դասավորության ընտրությամբ են պայմանավորված համագործակցային, թիմային աշխատանքի արդյունավետություն ու որակը [1, 71]:
- Փոքր խմբում դիտելն ու փոխհամագործակցելը հարմարման խնդիր ունեցող աշակերտի հետ ուսուցչին առավել հարմար է:

3. Գիտելիքների համատեղ կառուցում

- Աշակերտի ինքնակարգավորվող ուսումնասիրությունը զարգացնում է ինքնուրույնությունը:
- Հաղորդակցման պասիվ մոդելը փոխարինվում է ակտիվով. մեծանում է սոցիալական պահանջումների բավարարման ցանկությունը:
- Աշակերտը հարմարվում է կրթական միջավայրում, ներկայացնում է իր պատկերացումները՝ բանակցելով, երկխոսելով համադասարանցիների հետ:

4. Վերլուծություն և հետադարձ կապ

- Կրթական միջավայրում հարմարման խնդիր ունեցող աշակերտի վարքագիծը ուսումնասիրելիս ախտորոշվում և պլանավորվում են ոչ միայն կրթական միջավայրի, այլև աշակերտի թույլ և ուժեղ կողմերը:

Հնարավոր է ապահովել կոնկրետ աշակերտին վերաբերող անհատականացված հետադարձ կապ՝ տեղեկատվության հստակեցմամբ, որը հնարավորություն կտա պարույրաձև պլանավորելու՝ հաշվառելով ռիսկերը:

Կրթական միջավայրում սովորողների հարմարմանը նպաստող գործոն է սովորողի ակտիվությունը, որն առաջնահերթ գործոն է մարդու պատմամշակութային ծրագիրն իրականացնելու համար: Սովորողներն ինքնագարգացմամբ և ինքնաիրացմամբ կարող են վերախմաստավոր-

րել պատմամշակութային ծրագիրը, քանի որ, ի տարբերություն գենետիկականի, որը բնածին է, այն ձեռքբերովի է և հետևաբար կարելի է փոփոխել:

Հետազոտության նորույթը: Կրթական միջավայրում սովորողների հարմարման գործընթացը դիտարկվել է մանկավարժական մարդաբանության տեսանկյունից՝ քննարկելով սովորողների զարգացման մարդաբանական ծրագրերը: Քննարկվել են դասի պլանավորման ընթացքին համապատասխան ուսուցչի դասի ինքնավերլուծության բաղադրիչները, որոնց կիրառությունը կնպաստի կրթական միջավայրում հարմարման խնդիրներ ունեցող սովորողների համագործակցությանը խմբում:

ГЕНЕТИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ УЧАЩИХСЯ КАК УСЛОВИЕ АДАПТАЦИИ В ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СРЕДЕ

Казарян Аревик

*Ереванский государственный университет,
Армения*

Аннотация

В биологической программе учащихся закодированы генетические предпосылки, которые могут являться приоритетным условием адаптации в образовательной среде, если генетический потенциал будет проявлен в функционирующей фенотипной системе. Адаптация, обусловленная генетическими предпосылками образовательной среды и учащихся, может проявляться с обоюдным воздействием. С одной стороны, образовательная среда формируется механизмами адаптации, обусловленными генетическими предпосылками учащихся -морально-психологической атмосферой и межличностными отношениями учащихся. С другой стороны, воздействие образовательной среды может не способствовать процессу адаптации учащихся. Дезадаптация в образовательной среде приводит к нарушению эффективности обучения учащихся. Приоритетная задача учителя – принять за основу генетические предпосылки учащихся, планировать урок так, чтобы сформировать благоприятную образовательную среду для адаптации.

Проблема. Возможность адаптации учащихся в образовательной среде обусловлена сочетанием биологических и культурно-исторических программ их развития. В образовательной среде учитель должен учитывать генетические предпосылки учащихся и формировать границы проявления этих возможностей (норму реакции), содержание, формы.

Актуальные исследования, касающиеся проблемы. Актуальные исследования, касающиеся проблемы, проводились в рамках новых научных отраслей педагогики – педагогической антропологии, педагогической аксиологии, педагогической диагностики, педагогической валеологии. Анализируя и сопоставляя различные подходы и мнения, можно сказать, что сформировались в основном два концептуальных подхода: 1-ый – антропоцентрический, и 2-ой – экоцентрический, которые рассматривают сопоставимость биологических и культурно-исторических программ человека в окружающей среде с доминированием одного из компонентов системы «природа-человек-образование-культура».

Ключевые слова: биологическая программа, культурно-историческая программа, генотип, фенотип, генетические предпосылки, образовательная среда, адаптация, планирование адаптации.

LEARNERS GENETIC PREREQUISITES AS PRECONDITION OF THE ADAPTABILITY IN EDUCATIONAL ENVIRONMENT

Ghazaryan Arevik
Yerevan State University,
Armenia

Abstract

Learners' biological program encodes genetic prerequisites, which can serve as priority for the adaptation in educational environment, if the genetic potential is manifested in the functional, phenotypic system. The adaptability in the educational environment based on the learners' genetic prerequisites can be double influential. From one side the educational environment is formulated from the learners' adapting genetic prerequisites, with moral-psychological atmosphere and interpersonal relationships among the learners. From the other side the educational environment cannot foster learners' adaptation period. Non adaptation in the educational environment leads to distortion of effective learning of learners. Teacher's primary task is to base the learners' genetic prerequisites to plan a lesson, creating a favorable learning environment for adaptation.

The problem: The combination of biological and historical-cultural programs of students' development is conditioned by its adaptability to the educational environment. In the educational environment teachers should take into consideration learners' genetic prerequisites and formulate the boundaries/reaction norms/, content and forms.

Modern reasearch on the issue: Modern research on the subject has been carried out within the framework of young scientific branches of pedagogy, pedagogical anthropology, pedagogical axiology, pedagogical diagnostics, pedagogical valeology. Analyzing and combining different approaches and opinions, we can say that two conceptual approaches have been formed: 1. Anthropocentric and 2. Eco-centric, which are comparable to human biological and historical-cultural programs in the environment, with the domination of one of the components of the nature-human-education-culture system.

Research purpose: Identify the importance of learners' genetic prerequisites in adapting to the educational environment.

Keywords: *Biological program, historical-cultural program, genotype, phenotype, genetic prerequisites, educational environment, adaptation, adaptation planning.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Լ. և ուրիշներ, Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսություն և պրակտիկա, Երևան, 2004:
2. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Սոցիալական մանկավարժություն, Երևան, 2017:
3. Бим-Бад Б.М., Педагогическая антропология, Москва, 2018.
4. Выготский Л.С., Мышление и речь, Москва, 1999.
5. Коджаспорова Г.М., Педагогическая антропология, Москва, 2005.
6. Максакова В.И., Педагогическая антропология, Развития человека как научная проблема, Москва, 2004.

References (translated)

1. Alexanyan, L. and others, Theory of interactive teaching methods and parktics, Yerevan, 2004.
2. Harutyunyan, N. K., Ghazaryan, A. P., Ghukasyan, L. H., Social Pedagogy, Yerevan, 2017.
3. Bim-Bad, B. M., Pedagogical anthropology, Moscow, 2018.
4. Vygotsky, L. S., Psychology of human development, Moscow, 2005.
5. Kondjaspirova, Г. М., Pedagogical anthropology, Moscow, 2005.
6. Maksakova, V. I., Pedagogical anthropology. Scientific problems of personality, Moscow, 2004.

Материал был представлен и отправлен на рецензию: 15.04.2019

Принято к публикации: 25.04.2019

Рецензент: канд.биол.наук Карине Ованнисян

The material was submitted and sent to review: 15.04.2019

Was accepted for publication: 25.04.2019

Reviewer: Ph.D. Karine Hovhannisyan